## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
## ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19

27 սեպտեմբեր 2021թ.

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

ՀԱՐԳԵԼԻ՛ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 109-րդ եւ «Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ նախագծին կից ներկայացվում են՝

-նախագծի ընդունման հիմնավորումը,

-տեղեկանք, որտեղ տեսանելի ձևով ներկայացվում է օրենքի համապատասխան հոդվածներում առաջարկվող լրացումները և փոփոխությունները:

Նախագծի հիմնական զեկուցողն է Գևորգ Պապոյանը:

Խնդրում ենք ներկայացված նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Առդիր՝ (10) էջ:

Հարգանքով՝ ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ /021/

*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի հունվարի 16-ի ՀՕ-58-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-րդ կետով.

«16) **ընթացիկ եզրակացություն**՝ սույն օրենքով սահմանված կարգով իրականացված հաշվեքննության արդյունքում կազմված և պալատի կողմից հաստատված փաստաթուղթ.»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-րդ կետով.

«17) **հաշվեքննության արձանագրություն**՝ սույն օրենքով սահմանված կարգով հաշվեքննողի կողմից հաշվեքննության արդյունքների վերաբերյալ կազմված և իր ստորագրությամբ հաստատված փաստաթուղթ:»:

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Հաշվեքննիչ պալատը կարող է մշակել ուղեցույցներ, մեթոդաբանություն՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով:»:

**Հոդված 3.** Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 9. Հաշվեքննիչ պալատի գործունեության օրինականության, գաղտնիության, ազնվության, բանիմացության սկզբունքը**

1. Հաշվեքննիչ պալատն իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է օրինականության, գաղտնիության, ազնվության, բանիմացության սկզբունքներով:»

**Հոդված 4.** Օրենքի 10-րդ հոդվածի գործողությունը դադարեցնել:

**Հոդված 5.** Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասում «եզրակացությունները,» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացությունները» բառերը:

**Հոդված 6.** Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի գործողությունը դադարեցնել:

**Հոդված 7.** Օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասում «քաղաքացիական ծառայողների» բառերը փոխարինել «հաշվեքննողների» բառով:

**Հոդված 8.** Օրենքի 40-րդ հոդվածի.

1) 1-ին մասի 2-րդ նախադասությունը հանել,
2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 մասով.

«1.1 Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացությունները Ազգային ժողով է ներկայացնում սույն օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում և կարգով:»:

**Հոդված 9.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի նախագծի ներկայացումը պայմանավորված է «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքն (այսուհետ՝ Օրենք) ուժի մեջ մտնելուց և կիրարկվելուց հետո ի հայտ եկած որոշ նորմերի կարգավորման անհրաժեշտությամբ: Առաջարկվող լրացումներն ու փոփոխությունները կրում են ինչպես խմբագրական և կառուցվածքային բնույթ, այնպես էլ կարգավորումներ են առաջարկում Հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող հաշվեքննության ընթացակարգերի և բովանդակության վերաբերյալ:

2. Պալատի գործունեության նպատակը, ինչպես ամրագրված է Օրենքում, հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության վերաբերյալ Ազգային ժողովին և հանրությանը ժամանակին, մասնագիտական և անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է: Համաձայն օրենքի, նշյալ տեղեկատվությունը Ազգային ժողովին և հանրությանը տրամադրվում է հաշվեքննության արդյունքում կազմված և հաստատված ընթացիկ եզրակացությունների միջոցով, ուստի առաջարկվում է նախագծում լրացնել «ընթացիկ եզրակացություն» և դրա հետ փոխկապակցված «հաշվեքննության արձանագրություն» տերմինները:

3. Նախագծի 2-4-րդ, 6-րդ հոդվածներում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները խմբագրական բնույթի են կամ իրականացվում են անհարկի կրկնություններից խուսափելու համար: Մասնավորապես, Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը և 39-րդ հոդվածի 1-ին մասը կրկնվում են, ուստի անհարկի կրկնությունից խուսափելու համար առաջարկվում է 31-րդ հոդվածի 2-րդ մասի գործողությունը դադարեցնել:

4. Հաշվեքննությանը քաղաքացիական ծառայողների հետ համատեղ, պալատի որոշմամբ կարող են մասնակցել նաև քաղաքացիական աշխատանք կատարող անձինք, որոնք ևս պետք է լիարժեք ներգրավված լինեն հաշվեքննության գործընթացին: Նախագծի 7-րդ հոդվածի կարգավորմամբ առաջարկվում է կատարել համապատասխան փոփոխություն, որը ներկայացվել է Հաշվեքննիչ պալատի կողմից:

5. 2020 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման նկատմամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացություններ հաստատելու և օգտագործելու

մասին դրույթը, որի համաձայն հաշվեքննության արդյունքում կազմած ընթացիկ եզրակացությունները պալատը հաստատում է յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո չորս ամսվա ընթացքում և ներկայացնում Ազգային ժողովին: Բացի այդ, հաշվեքննությունների ընթացքում առանձին-առանձին կազմված ընթացիկ եզրակացությունները, որպես այդպիսք, դժվար է այլընտրանքային դիտարկել ՀՀ կառավարության կողմից եռամսյակային պարբերականությամբ ներկայացվող պետական բյուջեի կատարման վերաբերյալ տեղեկատվությանը և համատեղ քննարկել: Ուստի, առաջարկվում է պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման նկատմամբ ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների հետ մեկտեղ Ազգային ժողով ներկայացնել սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացություններ, որոնք իրենց մեջ կամփոփեն այդ հաշվեքննությունների ընթացքում կազմված ընթացիկ եզրակացությունները:

6. Նախագծով առաջարկվում է վերացնել պալատի այն պարտավորությունը, համաձայն որի յուրաքանչյուր եռամսյակի առաջին երեք աշխատանքային օրվա ընթացքում պալատը պետք է Ազգային ժողով ներկայացնի այդ եռամսյակի ընթացքում ըստ ամիսների բաշխված Ազգային ժողով ներկայացվելիք ընթացիկ եզրակացությունների նախատեսվող ցանկը: Այդ դրույթը ուժի մեջ մտնելուց ի վեր կիրառական նշանակություն չի ունեցել, քանի որ ընթացիկ եզրակացությունները քննարկող Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովը պալատի կողմից ներկայացված ընթացիկ եզրակացությունները օրենքով սահմանված կարգով ուսումնասիրում է՝ դրանք փաստացի ստանալուն պես:

7. Նախագծի մշակման ընթացքում հաշվի են առնվել Հաշվեքննիչ պալատի, SIGMA Եվրոպական միության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) համատեղ նախաձեռնության դիտարկումները, ինչպես նաև ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի փորձագետների կողմից իրականացված վերլուծության արդյունքները:

## Տեղեկանք
## փոփոխվող և լրացվող հոդվածների վերաբերյալ

### Հոդված 1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները սույն օրենքի իմաստով ունեն հետևյալ նշանակությունը.

1) **արտաքին պետական հաշվեքննություն** (այսուհետ՝ հաշվեքննություն)՝ հաշվեքննության առարկան կարգավորող իրավական ակտերով կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված գործարքներով սահմանված չափանիշների և պահանջների պահպանման գնահատում: Գնահատումն իրականացվում է հաշվեքննության առարկայի իրականացման համար իրավական ակտերով կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված գործարքներով սահմանված ժամանակաշրջանի կամ փուլի ավարտից հետո.

2) **հաշվեքննության առարկա՝** հաշվեքննության օբյեկտի կողմից իրականացվող ֆինանսատնտեսական գործունեություն.

3) **հաշվեքննության օբյեկտ՝** սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմիններ և հիմնարկներ.

4) **ֆինանսատնտեսական գործունեություն՝** հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում պետական և համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների և վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործում.

5) **ծրագրային կետ՝** հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի (այսուհետ՝ գործունեության ծրագիր) 1-ին և 2-րդ մասերի միավոր, որում նշվում են հաշվեքննության օբյեկտը, առարկան.

6) **հաշվեքննության առաջադրանք՝** հաշվեքննիչ պալատի կողմից հաստատվող փաստաթուղթ, որում նշվում են ծրագրային կետում ներառված հաշվեքննության օբյեկտը, առարկան, կատարման ժամկետը, հաշվեքննությունը ընդգրկող ժամանակաշրջանը, հաշվեքննության տեսակը, ընթացակարգը, հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը, պաշտոնատար անձինք, այդ թվում՝ հաշվեքննողները, փորձագետները և մասնագետները.

7) **հաշվեքննության տեսակներ՝** ֆինանսական, համապատասխանության, կատարողականի.

8) **հաշվեքննության ընթացակարգեր՝** զննում, դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում.

9) **ստուգում՝** ստուգման առարկան կարգավորող իրավական ակտերով կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված գործարքներով սահմանված չափանիշների և պահանջների պահպանման գնահատում: Գնահատումն իրականացվում է ստուգման առարկայի իրականացման համար իրավական ակտերով կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված գործարքներով սահմանված ժամանակաշրջանի կամ փուլի ավարտից հետո: Ստուգումը կատարվում է հաշվեքննության օբյեկտին առնչվող իրավաբանական

անձանց մոտ սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում, հաշվեքննության տեսակներով ու զննման, դիտարկման, հարցման, արտաքին հաստատման, վերահաշվարկի և վերակատարման ընթացակարգերով.

10) **ստուգման առարկա՝** ստուգման օբյեկտի կողմից իրականացվող ֆինանսատնտեսական գործունեություն.

11) **ստուգման օբյեկտ՝** սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավաբանական անձ.

12) **ստուգման առաջադրանք՝** հաշվեքննիչ պալատի կողմից հաստատվող փաստաթուղթ, որում նշվում են ծրագրային կետում ներառված հաշվեքննության օբյեկտին առնչվող ստուգման օբյեկտը, առարկան, կատարման ժամկետը, ստուգումն ընդգրկող ժամանակաշրջանը, հաշվեքննության տեսակը, ընթացակարգը, ստուգումն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումը, պաշտոնատար անձինք, այդ թվում՝ հաշվեքննողները, փորձագետները և մասնագետները.

13) **հաշվեքննող՝** հաշվեքննություն, ստուգում իրականացնող հաշվեքննիչ պալատի կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայող.

14) **մասնագետ՝** պայմանագրային կարգով հաշվեքննության, ստուգման գործընթացում ներգրավվող՝ համապատասխան բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձ.

15) **փորձագետ՝** պայմանագրային կարգով հաշվեքննության, ստուգման գործընթացում ներգրավվող՝ հաշվեքննության և ստուգման վերաբերյալ հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձ.:

16) **ընթացիկ եզրակացություն՝** սույն օրենքով սահմանված կարգով իրականացված հաշվեքննության արդյունքում կազմված և պալատի կողմից հաստատված փաստաթուղթ.

17) **հաշվեքննության արձանագրություն՝** սույն օրենքով սահմանված կարգով հաշվեքննողի կողմից հաշվեքննության արդյունքների վերաբերյալ կազմված և իր ստորագրությամբ հաստատված փաստաթուղթ:

***(1-ին հոդվածը լրաց., փոփ. 21.01.20 ՀՕ-31-Ն)***

### Հոդված 6. Միջազգային համագործակցությունը

1. Հաշվեքննիչ պալատը հաշվեքննության մեթոդաբանության և դրա իրականացման առաջավոր փորձի փոխանակման նպատակով համագործակցում է արտաքին պետական հաշվեքննություն իրականացնող բարձրագույն աուդիտորական մարմինների և նրանց միջազգային կազմակերպությունների հետ:

2. Հաշվեքննիչ պալատը կարող է մշակել ուղեցույցներ, մեթոդաբանություն՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով:

**~~Հոդված 9. Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության ստանդարտները~~**

~~1. Հաշվեքննիչ պալատը կարող է մշակել ուղեցույցներ, մեթոդաբանություն՝ առաջնորդվելով Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) ստանդարտներով:~~

**Հոդված 9. Հաշվեքննիչ պալատի գործունեության օրինականության, գաղտնիության, ազնվության, բանիմացության սկզբունքը**

Հաշվեքննիչ պալատն իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվում է օրինականության, գաղտնիության, ազնվության, բանիմացության սկզբունքներով:

**~~Հոդված 10. Մասնագիտական կարողությունների ապահովման և շարունակական զարգացման սկզբունքը~~**

~~1. Հաշվեքննիչ պալատը սահմանում է չափորոշիչներ հաշվեքննիչ պալատի կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատանքի ընդունվողների համար, ինչպես նաև հաստատում է հաշվեքննիչ պալատի կառուցվածքային ստորաբաժանումներում քաղաքացիական ծառայողների մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման ծրագիրը:~~

***(10-րդ հոդվածը փոփ. 21.01.20 ՀՕ-31-Ն)***

**Հոդված 26. Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունը**

1. Հաշվեքննիչ պալատի հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը հաշվեքննության ավարտից հետո ընթացիկ եզրակացության նախագիծը ներկայացնում է տվյալ կառուցվածքային ստորաբաժանման գործունեությունը համակարգող հաշվեքննիչ պալատի անդամին՝ վավերացման:

2. Ընթացիկ եզրակացության նախագիծը հաշվեքննիչ պալատի անդամի կողմից վավերացվելուց հետո ներկայացվում է հաշվեքննիչ պալատի հաստատմանը: Ընթացիկ եզրակացության նախագծի հետ պալատ են ներկայացվում նաև վերջինիս կազմման համար հիմք հանդիսացող հաշվեքննության արձանագրությունները ու դրանց վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի առարկությունները և բացատրությունները:

3. Ընթացիկ եզրակացության վերաբերյալ հաշվեքննիչ պալատը որոշում է կայացնում դրա նախագիծն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

4. Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ ընթացիկ եզրակացությունները, ինչպես նաև սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացությունները համապատասխանաբար այդ

ժամանակահատվածների ավարտման օրվանից հետո՝ չորս ամսվա ընթացքում, ներկայացնում է Ազգային ժողով:

5. Գործունեության ծրագրի երկրորդ մասում ընդգրկված ծրագրային կետի՝

1) կատարման արդյունքում կազմված՝

ա. կատարողականի հաշվեքննության ընթացիկ եզրակացությունը ներառում է հաշվետվություն հաշվեքննության առարկայի տնտեսման և (կամ) նպատակային արդյունավետության և (կամ) ծախսային արդյունավետության վերաբերյալ,

բ. ֆինանսական և համապատասխանության հաշվեքննությունների ընթացիկ եզրակացությունները ներառում են սույն օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի տեղեկատվությունը և 2-րդ կետի «ա» կամ «բ» կամ «գ» կամ «դ» ենթակետով նախատեսված կարծիքը.

2) կատարման արդյունքում կազմված ընթացիկ եզրակացությունը, ըստ անհրաժեշտության, ներառում է՝

ա. գրառում՝ անհամապատասխանություն կամ խեղաթյուրում չհայտնաբերելու մասին,

բ. գրառում՝ անհամապատասխանության կամ խեղաթյուրման վերաբերյալ,

գ. առաջարկություններ հաշվեքննության օբյեկտի ղեկավարությանը և այլ շահագրգիռ կողմերին,

դ. հաշվեքննության արձանագրությունների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտների ղեկավարների ներկայացրած առարկությունները և բացատրությունները,

ե. եզրակացություններ,

զ. այլ տեղեկատվություն:

6. Հաշվեքննիչ պալատը գործունեության ծրագրի 2-րդ մասում ընդգրկված ծրագրային կետի հաշվեքննության արդյունքում կազմված ընթացիկ եզրակացությունը հաստատվելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ուղարկում է ծրագրային կետում նշված հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որն ընթացիկ եզրակացությունն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, հաշվեքննիչ պալատին տրամադրում է ընթացիկ եզրակացությունում ամրագրված անհամապատասխանության, խեղաթյուրման վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

7. Հաշվեքննիչ պալատը սույն հոդվածի 6-րդ մասում նշված տեղեկատվությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, այն կցում է համապատասխան ընթացիկ եզրակացությանը և ներկայացնում Ազգային ժողով և Հայաստանի Հանրապետության կառավարություն:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված տեղեկատվության տրամադրման պահանջի խախտման դեպքում հաշվեքննիչ պալատը նախատեսված ժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, դրա վերաբերյալ տեղեկատվությունը կցում է ընթացիկ եզրակացությանը և ուղարկում է Ազգային ժողով և Հայաստանի Հանրապետության կառավարություն:

***(26-րդ հոդվածը խմբ. 03.10.18 ՀՕ-396-Ն)***

**Հոդված 31. Հաշվեքննության նպատակը**

1. Հաշվեքննության նպատակն է պարզել հաշվեքննության առարկայի օրինականության ու տնտեսման, նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքների պահպանումը:

~~2. Հաշվեքննության իրականացմամբ հաշվեքննիչ պալատն ուսումնասիրում է հաշվեքննության օբյեկտի ներքին աուդիտի համակարգի արդյունավետությունը: Ներքին աուդիտի համակարգը արդյունավետ գնահատելու դեպքում հաշվեքննիչ պալատը կարող է հիմնվել վերջինիս արձանագրած արդյունքների վրա:~~

**Հոդված 38. Հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձանց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը**

1. Հաշվեքննության կամ ստուգման առաջադրանքում նշված համապատասխան հաշվեքննության օբյեկտի ղեկավարը կամ պատասխանատու պաշտոնատար անձը, իսկ իրավաբանական անձանց մոտ հաշվեքննության իրականացման դեպքում նաև համապատասխան ծրագրային կետում նշված հաշվեքննության օբյեկտի ղեկավարը կամ պատասխանատու պաշտոնատար անձն իրավասու է՝

1) ծանոթանալու հաշվեքննության արձանագրությանը.

2) օրենքով սահմանված կարգով բողոքարկելու հաշվեքննողների գործողությունները:

2. Հաշվեքննության օբյեկտի ղեկավարը իրավասու է հաշվեքննության արձանագրության վերաբերյալ սույն օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնելու առարկություններ և բացատրություններ:

3. Հաշվեքննության օբյեկտի պաշտոնատար անձը պարտավոր է՝

1) անհրաժեշտ աշխատանքային պայմաններ ստեղծել հաշվեքննողների գործունեության համար.

2) հաշվեքննության ընթացքում հաշվեքննողի պահանջով երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել հաշվեքննության առարկայի վերաբերյալ առկա և հասանելի ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն, փաստաթղթեր և գրանցումներ.

3) հաշվեքննության ընթացքում անհապաղ տեղեկացնել հաշվեքննողին տրամադրված տեղեկատվության, փաստաթղթերի և գրանցումների ցանկացած փոփոխության և լրացումների մասին.

4) չխոչընդոտել հաշվեքննության ընթացքին, կատարել հաշվեքննողների օրինական պահանջները:

4. Ծրագրային կետում նշված հաշվեքննության օբյեկտի ղեկավարը պարտավոր է մեկամսյա ժամկետում հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների,

խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

5. Հաշվեքննիչ պալատի ~~քաղաքացիական ծառայողների~~ հաշվեքննողների՝ հաշվեքննությանը վերաբերող օրինական պահանջները պարտադիր են հաշվեքննության օբյեկտի ղեկավար և այլ պաշտոնատար անձանց համար:

***(38-րդ հոդվածը փոփ. 21.01.20 ՀՕ-31-Ն)***

**Հոդված 40. Հաշվեքննիչ պալատի ակտերն Ազգային ժողով ներկայացնելը**

1. Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացություններն Ազգային ժողով են ներկայացվում սույն օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված ժամկետներում և կարգով: ~~Յուրաքանչյուր եռամսյակի առաջին երեք աշխատանքային օրվա ընթացքում հաշվեքննիչ պալատի նախագահն Ազգային ժողով է ուղարկում այդ եռամսյակի ընթացքում ներկայացվելիք ընթացիկ եզրակացությունների նախատեսվող ցանկը՝ բաշխված ըստ ամիսների:~~

1.1 Հաշվեքննիչ պալատը պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ եզրակացությունները Ազգային ժողով է ներկայացնում սույն օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում և կարգով:

2. Պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվեքննիչ պալատի եզրակացությունն Ազգային ժողով է ներկայացվում սույն օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում և կարգով:

3. Պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվեքննիչ պալատի եզրակացությունն Ազգային ժողովում ներկայացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի տարեկան կատարողականի քննարկման ընթացքում:

4. Հաշվեքննիչ պալատն իր գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումն Ազգային ժողով է ներկայացնում սույն օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում և կարգով:

5. Հաշվեքննիչ պալատի տարեկան հաղորդումը քննարկվում է Ազգային ժողովում՝ առանց որոշում ընդունելու:

***(40-րդ հոդվածը լրաց. 03.10.18 ՀՕ-396-Ն)***